



**ԱՅԼԵՏՐԱՆՔԱՅԻՆ  
ՉԵԿՈՒՅՅ**

**ՆԵՐԿԱՅԱՆՎՈՂ  
ՄԱԿ-Ի ԵՐԵՒԱՅԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԿՈՄԻՏԵԻՆ**

ԵԶՂԻ  
ԵՐԵՒԱՆԵՐԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ  
ԻՐԱՅՈՒՄԸ  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



# ՄԱԿ-Ի ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՁԵԿՈՒՅՑ

ԵԶԴԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

*Այս զեկույցը պատրաստվել է «GSP+-ի միջոցով մարդու և աշխատանքային իրավունքների խթանումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում և այժմ ներկայացվում է GSP+ մոնիթորինգի գործընթացի համար: Ավելի ուշ ամսաթվով զեկույցը պետք է ներկայացվի նաև ՄԱԿ-ի երեխայի իրավունքների կոմիտե, հետևաբար զեկույցի բովանդակությունը մինչ այդ կարող է փոփոխվել:*



DEMOCRACY  
REPORTING  
INTERNATIONAL



## Չեկույցը պատրաստեցին՝

Եվրասիա համագործակցություն հիմնադրամը,

«Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն»  
հասարակական կազմակերպությունը,

«Արմավիրի զարգացման կենտրոն»  
հասարակական կազմակերպությունը,

«Սինջար» եզդիների ազգային միավորումը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՄՊՈՒՅՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՍԻՆ  
EUROPEAN UNION FOR ARMENIA

*Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն են կրում Եվրասիա համագործակցություն հիմնադրամը, «Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն» հասարակական կազմակերպությունը, «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպությունը և «Սինջար» եզդիների ազգային միավորումը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:*

# Բովադակություն

ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ  
ՁԵԿՈՒՅՑՆԵՐ

Ներածություն.....	1
Յոդված 4. Կոնվենցիայով պայմանավորված պետության պարտավորությունները .....	3
Առաջարկություններ.....	5
Յոդված 14. Երեխայի՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը.....	7
Առաջարկություններ՝ .....	9
Յոդված 19. Պաշտպանություն բռնության բոլոր ձևերից, անուշադրությունից և չարաշահումից .....	10
Առաջարկություններ.....	12
Յոդված 28. Երեխայի՝ կրթության իրավունքը.....	13
Դպրոցից դուրս մնալը .....	13
Երկարատև բացակայություններ սեզոնային աշխատանքի պատճառով .....	15
Խտրականություն.....	17
Լեզուն .....	18
Առաջարկություններ.....	19
Կառուցողական երկխոսության ընթացքում Հայաստանի Կառավարությանն առաջարկվող հարցեր .....	21
Հարցեր օրենսդրության վերաբերյալ.....	21
Հարցեր երեխայի՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի վերաբերյալ.....	22
Հարցեր բռնության և չարաշահումների մասին .....	23
Հարցեր կրթության վերաբերյալ.....	24



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

- (1) Սույն այլընտրանքային զեկույցը պատրաստվել է Եվրասիա համագործակցություն հիմանդրամի (ԵՀՀ), Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոնի, «Սինջար» Եզդիների ազգային միավորման և Արմավիրի զարգացման կենտրոնի համատեղ ջանքերով՝ «GSP+-ի միջոցով մարդու և աշխատանքային իրավունքների խթանումը» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական Միության և իրականացվում Եվրասիա համագործակցություն հիմանդրամի (ԵՀՀ) կողմից՝ «Democracy Reporting International»-ի աջակցությամբ:
- (2) Չեկույցը կենտրոնացած է Հայաստանում եզդիական համայնքի երեխաների իրավունքների վրա: 35,000-ից ավելի բնակչություն ունեցող եզդիները էթնիկ-կրոնական փոքրամասնություն հանդիսացող ամենամեծ խումբն են Հայաստանում, որտեղ բնակչության 98%-ից ավելին իրեն համարում է հայ<sup>1</sup>: Ըստ վերջին՝ 2011թ. անցկացված մարդահամարի տվյալների, ազգային փոքրամասնություններին պատկանող 19 տարին չըրացած 16,480 անձանցից 12,214-ը ներկայացնում էին եզդիական համայնքը<sup>2</sup>:
- (3) Սա Հայաստանում էթնիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքների վրա կենտրոնացող առաջին այլընտրանքային զեկույցն է: Չնայած երեխաները կրում են այն բոլոր դժվարությունները և իրավունքների այն բոլոր խախտումները, որոնց բախվում են երեխաները Հայաստանում առհասարակ, դրա հետ մեկտեղ նրանք ունենում են նաև հատուկ բնույթի խնդիրներ, որոնք մինչ այժմ մեծամասամբ դուրս են մնացել երկրում երեխաների իրավունքներին ուղղված՝ պետական մարմինների, միջազգային կազմակերպությունների և տեղական ՀԿ-ների զեկույցներից: Սույն այլընտրանքային զեկույցը կենտրոնացած է բացառապես նման խնդիրների վրա և չի ներառում այն խնդիրները, որոնք վերաբերելի են Հայաստանի բոլոր երեխաներին՝ անկախ նրանց կրոնական և/կամ էթնիկ պատկանելությունից (օր՝ մանկական աղքատությունը):

1. Stu՝ <https://www.armstat.am/file/doc/99478378.pdf>

2. Stu՝ <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-eng.pdf>

- (4) Սույն զեկույցը հիմնված է երեխաների իրավունքներին՝ ընդհանրապես և փոքրամասնությունների երեխաների իրավունքներին՝ մասնավորապես առնչվող օրենսդրության և կարգավորիչ դաշտի վերլուծության, մամուլի համապատասխան լուսաբանումների մշտադիտարկման և Հայաստանի՝ եզրի բնակչության առավել մեծ քանակն ունեցող Արմավիրի մարզում թիրախային խմբերի հետ անցկացված 6 հանդիպումների արդյունքների վրա:
- (5) Հայաստանում կրոնական և եթնիկ փոքրամասնությունների երեխաների իրավունքների զանազան խախտումները փոխկապակցված են և այդպիսով՝ վերաբերելի են միաժամանակ նաև Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի (ԵԻԿ)-ի հոդվածներին: Օրինակ, աղջիկների՝ դպրոցից դուրս մնալը առերևույթ կրթությանը վերաբերող խնդիր է և վելաբերելի է 28-րդ հոդվածին: Սակայն, այս խնդրի արմատներն ընկած են վաղ ամուսնությունների վնասակար երևույթի մեջ, որն արդեն մի քանի այլ հոդվածների խնդիր է: Նմանապես և 14-րդ հոդվածին վերաբերելի մի շարք խնդիրներ առնչվում են 12-րդ և 13-րդ հոդվածներին ևս: Հետևաբար, վերոգրյալը հաշվի առնելով, սույն զեկույցը կենտրոնանում է կարևորագույն չորս, այն է՝ 4-րդ, 14-րդ, 19-րդ և 28-րդ հոդվածների վրա, որոնց համադրումն արտահայտում է փոխկապակցված խնդիրների, մարտահրավերների և բացերի մի ամբողջ համալիր, որոնք նպաստում են Հայաստանի եթնիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաների դուրս մղմանն ու իրավունքների խախտմանը:
- (6) Չորս հոդվածների շրջանակներում իրավիճակի նկարագրությունից զատ զեկույցում ներկայացվում են առաջարկություններ ՀՀ Կառավարությանը, ինչպես նաև առաջարկվում են հարցեր՝ Երեխայի իրավունքների կոմիտեի կողմից ՀՀ Կառավարությանն ուղղվելու համար:



## ՀՈԴՎԱԾ 4. ԿՈՆՎԵՆՏԻԱՅՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(1) Երկրի օրենսդրական և կարգավորիչ դաշտը ոչ ամբողջությամբ է երաշխավորում եթևիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանությունն ու նրանց ընդգրկումը հասարակության մեջ:

1.1) Հայաստանում չկա խտրականության դեմ ուղղված արդյունավետ և համապարփակ օրենսդրություն: Խտրականության դեմ ուղղված առանձին օրենքի բացակայության պայմաններում խտրականությանը վերաբերող դրույթները ցրված են տարբեր օրենսդրական ակտերում: Գոյություն չունեն ոչ միայն կոնկրետ կարգավորումներ խտրականության ճանաչման, կանխարգելման կամ հակազդման ուղղությամբ, այլև բացակայում է խտրականության պաշտոնական և համապարփակ սահմանումը: Համապատասխան օրենսդրության բացակայությունը խոչընդոտ է փոքրամասնություն հանդիսացող խմբերի ներառման համար և ավելի է նպաստում փոքրամասնություն կազմող համայնքների երեխաների հանդեպ խտրականությանը, նրանց իրավունքների ոտնահարմանն ու դուրս մղմանը:

(2) Խտրականության դեմ օրենսդրության բացակայությունից զատ, փոքրամասնությունների երեխաների իրավունքները դուրս են բերված մի շարք կարևորագույն փաստաթղթերից:

2.1) Չնայած «Երեխայի իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքում առկա են երեխաների՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը երաշխավորող դրույթներ, դրանք արտացոլված չեն այդ օրենքի կատարումն ապահովող որևէ փաստաթղթում կամ գործողությունների ծրագրում: Օրենքի համաձայն, երեխայի իրավունքների պաշտպանությունն իրականացվում է երեխաների իրավունքների պաշտպանության հնգամյա ռազմավարական ծրագրով և տարեկան ծրագրերով սահմանված եղանակով և ժամկետներում: «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագիրը», որը ԵԻԿ-ի, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող օրենսդրության կատարման

ուղղությամբ պետության ջանքերը (այդ թվում՝ բյուջետային և այլ միջոցների հատկացումը) արտացոլող հիմնական փաստաթուղթն է, չի նախատեսում որևէ նպատակ կամ գործողություն, որն ուղղված կլինի հատկապես եթևիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքների պաշտպանությանը, նրանց վիճակի բարելավմանը, կարիքներին արձագանքելուն և հասարակության մեջ ներառվելուն:

2.2) Փոքրամասնությունների երեխաների կարիքներն ու իրավունքները թերի են արտացոլված ռազմավարական բնույթի մեկ այլ փաստաթղթում ևս, այն է՝ «ՀՀ կրթության՝ մինչև 2030թ. զարգացման պետական ծրագրում»: Այդ փաստաթուղթը մատնանշում է փոքրամասնությունների երեխաների իրավունքներին վերաբերող ընդամենը երկու նպատակ՝ 1) ազգային փոքրամասնությունների լեզուներով գրականության մշակում, և 2) գյուղերում, այդ թվում՝ փոքրամասնությունների գյուղերում նախադպրոցական ծառայությունների ստեղծում: Որևիցե այլ՝ փոքրամասնությունների երեխաների համար հասցեականորեն մշակված միջոցառում նախատեսված չէ այս կարևորագույն փաստաթղթում, որը վերաբերում է կրթության ոլորտում հաջորդ տասնամյակում պետության կողմից իրականացվելիք գործողություններին:

2.3) Համապետական մակարդակի երրորդ կարևորագույն փաստաթուղթը, որը չի անդրադառնում եթևիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաներին, «Հայաստանում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը» փաստաթուղթն է: Չնայած այն հատկապես ուղղված է Հայաստանի հասարակության մեջ ներառականությունը՝ երեխաների ներառական կրթության զարգացումն ապահովելուն, սակայն չի թիրախավորում փոքրամասնությունների երեխաներին և կենտրոնանում է բացառապես հաշմանդամություն ունեցող երեխաների ներառման վրա:

(3) Եթևիկ երեք փաստաթղթերում փոքրամասնությունների երեխաներին չանդրադառնալը ոչ թե մասնավոր դեպք է, այլ ընդհանուր միտման արտահայտություն: Եթևիկ և կրոնական համայնքների իրավունքներն ու կարիքները մեծապես թերի են ներկայացված կամ ընդհանրապես ներկայացված չեն համապատասխան օրենսդրական, կարգավորիչ

և ռազմավարական բնույթի միջոցառումներում, ինչն էլ, իր հերթին, հանդիսանում է փոքրամասնությունների (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց, ԼԳԲՏՔ անձանց և այլն) կարիքները պետության համապատասխան գործողություններում չճանաչելու և չներառելու ավելի լայն միտման մի մասը:

- (4) Այս իրավիճակին նպաստող պատճառներից է որոշումների կայացման ոչ մասնակցային ռազմավարական քաղաքականությունն ու պրակտիկան, որոնք մերժում են փոքրամասնություն կազմող խմբերի մասնակցությունը վերջիններիս կյանքի վրա ներգործող որոշումների կայացման գործընթացին՝ հանգեցնելով այնպիսի օրենսդրության, կարգավորումների և քաղաքականությունների ընդունման, որոնք ոչ միայն չեն արտացոլում փոքրամասնություն կազմող խմբերի իրավունքներն ու կարիքները, այլև հաճախ կրում են խտրական բնույթ:<sup>3</sup>
- (5) Չնայած Հայաստանի նոր կառավարությունը, որն իշխանության է եկել խաղաղ իշխանափոխության արդյունքում, քանիցս արտահայտել է իր պատրաստակամությունը՝ ապահովելու բոլոր անհատների համար հավասար իրավունքներ և հնարավորություններ, այդ թվում նաև փոքրամասնություն կազմող խմբերի իրավունքների պաշտպանություն, սակայն ՀՀ Կառավարության նոր ընդունած ծրագիրը նույնպես հատուկ անդրադարձ չի կատարում էթնիկ և կրոնական փոքրամասնությունների իրավունքներին:

### **Առաջարկություններ՝**

- (6) Ընդունել խտրականության դեմ արդյունավետ և համապարփակ օրենսդրություն:
  - 6.1) Ապահովել արդյունավետ մեխանիզմների, այդ թվում՝ դիտարկման և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմների, ինչպես նաև Հավասարության հարցերով մարմնի առկայությունը՝ այս օրենսդրության կիրառումը գործնականում երաշխավորելու համար: Ապահովել, որպեսզի այս մեխանիզմները հազեցած լինեն համարժեք ռեսուրսներով՝ պատշաճ կերպով իրենց գործառույթներն իրականացնելու և ոչ թե պարզապես ձևական գոյությունը պահպանելու համար:
  - 6.2) Ապահովել, որպեսզի փոքրամասնություն կազմող խմբերը

3. Տե՛ս, <https://www.gov.am/files/docs/3133.pdf>

ներառված լինեն օրենսդրական և իրավակիրառ մեխանիզմների մշակման գործընթացին:

- 6.3) Ընդհանուր բնակչության և փոքրամասնություն կազմող համայնքների շրջանում հասցեական միջոցառումներ իրականացնել՝ խտրականության դեմ օրենսդրության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:
- (7) Փոքրամասնություն կազմող համայնքների հետ համագործակցելով, վերանայել գոյություն ունեցող համապետական գործողության բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագիրը», «ՀՀ կրթության՝ մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիրը» և «Հայաստանում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների ծրագիրը և ժամանակացույցը»՝ այն հաշվով, որպեսզի այս փաստաթղթերն արդյունավետ կերպով անդրադառնան փոքրամասնությունների երեխաների իրավունքներին և կարիքներին, ինչպես նաև՝ կատարել առանձին բյուջետային, կադրային և այլ հատկացումներ:
- (8) Ներդնել և կիրարկել որոշումների ներառական կայացման պրակտիկան՝ ապահովելու համար փոքրամասնություն կազմող խմբերի ներկայացուցիչների գործուն մասնակցությունը համապատասխան որոշումների կայացման գործընթացի բոլոր մակարդակներում՝ համապետական, մարզային և տեղական:
- (9) Իրականացնել համապետական՝ քաղաքականությունների, ծրագրերի և այլ փաստաթղթերի մշտադիտարկում՝ ուղղված դրանց ներառականության գնահատմանը:
- (10) Վավերացնել «Հաղորդակցման ընթացակարգի վերաբերյալ» ՄԱԿ-ի ԵԻԿ-ին կից Կամընսփր արձանագրությունը, որն ընդունվել է 2011թ. և ուժի մեջ մտել 2014թ. ապրիլին:
- (11) Իրականացնել իրազեկվածության մակարդակի բարձրացման հասցեական միջոցառումներ ուղղված՝ ա) ընդհանուր բնակչության շրջանում փոքրամասնությունների իրավունքների մասին իրազեկվածության բարելավմանը և բ) փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավագիտակցության բարձրացմանը:

## ՀՈՂՎԱԾ 14. ԵՐԵՒԱՅԻՆՍՏՔԻ, ԽՂԾԻ ԵՎ ԿՐՈՆԻ ԱՉԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

- (1) Երեխաների՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքները նախատեսված են օրենսդրական մի քանի ակտերում և ամրագրված՝ ՀՀ Սահմանադրությամբ և «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով: Այնուամենայնիվ, գործնականում երեխաները հաճախ զրկված են իրենց կրոնի ազատությունն իրագործելու հնարավորությունից և դժվարություններ են ունենում իրենց էթնիկ և կրոնական ինքնությունը պահպանելու և արտահայտելու առումով:
- (2) Փոքրամասնությունների երեխաների կրոնի ազատության իրավունքը հաճախ խախտվում է դպրոցում: Չնայած ՀՀ օրենսդրությամբ հստակորեն սահմանվում է, որ կրթությունը և մասնավորապես՝ երեխաների կրթությունը, երկրում կրում է աշխարհիկ բնույթ («Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով ամրագրված է, որ պետությունն ապահովում է կրթության աշխարհիկ և ժողովրդավարական բնույթը), դպրոցում երեխաները, որպես իրենց առօրյա դպրոցական կյանքի մի մաս, հաճախ ենթարկվում են կրոնի, մասնավորապես՝ Հայ առաքելական եկեղեցու ներգործությանը:
- (3) Առաջին և կարևորագույն խնդիրը «Հայ առաքելական եկեղեցու պատմություն» առարկան է: Կրոնական քարոզի տարրեր պարունակող այս առարկան, ինչպես ապացուցվում է դասագրքերի բովանդակային ուսումնասիրությունների և դաշտային հետազոտությունների արդյունքում, կենտրոնացած չէ միայն Հայ առաքելական եկեղեցու պատմության, ուսմունքի և սկզբունքների վրա:<sup>4</sup> Առարկան պարտադիր է բոլոր դպրոցներում: Բացի այն, որ կրոնական փոքրամասնությունների երեխաներն պարտավորված են սովորել, քննարկել և ընդունել այլ կրոնական համոզմունքները, առարկան հաճախ ընդգրկում է զուտ կրոնական պրակտիկայի տարրեր, օրինակ՝ Աստվածաշնչի ընթերցանությունը, խմբային աղոթքը, դասասենյակում եկեղեցականի ներկայությունը, դպրոցական ուղևորությունները կրոնական վայրեր, մասնակցությունը կրոնական տոնակատարություններին, արարողություններին և այլն: Թիրախային խմբերի մասնակիցները նշել են նաև դեպքեր, երբ յուրաքանչյուր դասաժամ սկսվել է բարձրաձայն խմբային աղոթքով: Այն

4. Տե՛ս, [https://epfarmeria.am/sites/default/files/Document/2014\\_Field\\_Study\\_Rights\\_of\\_Children\\_en.pdf](https://epfarmeria.am/sites/default/files/Document/2014_Field_Study_Rights_of_Children_en.pdf)

հարցին, թե արդյո՞ք նման գործողությունների ժամանակ իրենց կարծիքը հաշվի է առնվել, թե ոչ, եզրի երեխաների մեծ մասը նմանօրինակ պատասխան է տվել, որ *«Այնպես չէ, որ մեզ հենց ստիպում են կրոնական բաներ անել, նրանք մեզ ընդհանրապես բան չեն հարցնում: Սա դպրոց է, ու մեր փոխարեն դասատուներն են ամեն ինչ որոշում»* (եզրի տղա, 7-րդ դասարան): Այս առարկան դպրոցական պարտադիր ծրագրից հանելու և կամընտիր դարձնելու հարցը տարիների ընթացքում բարձրացվել է թե՛ եզրիական համայնքի և թե՛ տեղական ու միջազգային ԶՅԿ-ների կողմից:<sup>5</sup>

- (4) Փոքրամասնությունների երեխաների կրոնի ազատության իրավունքի իրացման մեկ այլ խոչընդոտ է եթևիկ և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ լայնորեն տարածված խտրական վերաբերմունքը: Դպրոցում և դպրոցից դուրս եզրի երեխաները հաճախ բախվում են վնասակար կարծրատիպերի, որոնց հիմքում եզրիների՝ «ծույլ, ոչ հիգիենիկ, վատ կրթված և այլն» լինելու մասին պատկերացումներն են: *«Ամենավատը, երբ նրանք «եզդիկ» ասում են որպես վիրավորանք: Ասենք՝ «Ոնց որ եզդի լինես» նշանակում է, որ կեղտոտ ու էժան տեսք ունես»* (եզրի աղջիկ, 6-րդ դասարան): Նման պատկերացումներից խուսափելու նպատակով եզրի երեխաների մոտ միտում կա թաքցնելու իրենց ինքնությունը թե՛ ուսուցիչներից և թե՛ համադասարանցիներից, ինչով իրենք ոչ միայն սահմանափակվում են իրենց կրոնի ազատությունը, այլ նաև՝ մեկուսանում իրենց տարեկիցներից:
- (5) Վերը նշված խնդիրների շարունակական խորացմանը նպաստող մեկ այլ կարևոր մարտահրավեր է այն, որ մտքի և կրոնի ազատության իրենց իրավունքի մասին իրազեկվածության ցածր մակարդակի պատճառով եզրի երեխաները չեն համարում, որ իրենց ազատությունները խախտվում են, և վերը նկարագրվածն ընդունում են որպես նորմ, որը չի կարող և չպետք է վիճարկվի: Սույն զեկույցի պատրաստման հետազոտական փուլի շրջանակներում թիրախային խմբերի հետ անցկացված քննարկումների ընթացքում դպրոցներում կրոնական ազատություններին վերաբերող հարցերին սովորաբար տրվող պատասխանները այսպիսին էին՝ *«Երբեմն կարողում ենք Աստվածաշունչ, երբեմն աղոթում ենք ու հաճախ դպրոցական էքսկուրսիա ենք գնում եկեղեցի, բայց դա լրիվ նորմալ է, քանի որ մենք ապրում ենք քրիստոնեական երկրում: Ոչ մի բան էլ չես կարող անել»* (եզրի աղջիկ, 8-րդ դասարան):

5. Նույն տեղում:

## Առաջարկություններ՝

- (6) Վերանայել պարտադիր դպրոցական ծրագիրը (ներառյալ՝ առարկայական ծրագիրը և գրականությունը)՝ այն հաշվով, որպեսզի այն համապատասխանի կրոնական և էթնիկ փոքրամասնությունների երեխաների կարիքներին և իրավունքներին ու չխախտի նրանց կրոնի ազատությունը:
- (7) «Հայ եկեղեցու պատմություն» առարկան կամընտիր դարձնել աշակերտների համար:
- (8) Ապահովել, որպեսզի երեխաները չենթարկվեն կրոնական պրակտիկայի տարրերի պարտադիր ներգործությանը, ինչպիսիք են, օրինակ՝ աղոթքը, Աստվածաշնչի ընթերցանությունը, ուղևորությունը դեպի կրոնական վայրեր, եկեղեցականի ներկայությունը և այլն, այդ թվում նաև՝ ուսուցիչներին վերապատրաստելու, դպրոցական առարկայական ծրագիրը և քաղաքականությունները վերանայելու, հաղորդումների ներկայացման մեխանիզմներ ներդնելու միջոցով, ինչը թույլ կտա երեխաներին և ծնողներին նմանատիպ դեպքերի մասին իշխանություններին տեղեկացնել և իրականացնել պարբերական մշտադիտարկում:
- (9) Իրականացնել լայնածավալ իրազեկման և հանրակրթական միջոցառումներ՝ ներառելով դրանք դպրոցական ծրագրերում և նպատակ ունենալով արձագանքել կրոնական և էթնիկ փոքրամասնություն կազմող խմբերի նկատմամբ խտրական մոտեցումներին, ընկալումներին և կարծրատիպերին:
- (10) Իրականացնել լայնածավալ իրազեկման և հանրակրթական միջոցառումներ կրոնական և էթնիկ փոքրամասնություն կազմող խմբերի հետ՝ իրենց իրավունքների և ազատությունների մասին իրազեկվածությունը բարելավելու նպատակով:
- (11) Անցկացնել ուսուցիչների կանոնավոր վերապատրաստում՝ նպատակ ունենալով ապահովել կրթության նկատմամբ ներառական ու ոչ խտրական վերաբերմունքը և հատկապես եզոփ երեխաների հետ աշխատանքում ներառական մեթոդների կիրառումը:

## ՀՈՂՎԱԾ 19.ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԶԵՎԵՐԻՑ, ԱՆՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԻՑ

- (1) Հայաստանում երեխաները պարբերաբար ենթարկվում են չարաշահումների կամ բռնության տարբեր ձևերի, ինչպիսիք են, օրինակ՝ ֆիզիկական պատիժները տանը և դպրոցում, հալածանքը, ընտանեկան բռնությունը և երեխայի աշխատանքը:<sup>6</sup> Եզդի երեխաները, բռնության այս բոլոր ձևերին ենթարկվելուց բացի, բախվում են այլ առանձնահատուկ դժվարությունների ևս:
- (2) Եզդիական համայնքի երեխաների հիմնական խնդիրը վաղ ամուսնություններն են, այդ թվում՝ հարկադիր: Հայաստանի եզդիական համայնքում լայնորեն ընդունված երևույթ է, երբ աղջիկներն ամուսնանում են 12-13 տարեկան հասակում: Այս փաստը հիմնավորվում է նաև թիրախային խմբերի հետ այն քննարկումների արդյունքներով, որոնք անցկացվել են սույն զեկույցը նախապատրաստելիս: Թիրախային խմբերի հետ բոլոր քննարկումների ընթացքում գրեթե բոլոր մասնակիցների կողմից նշվել է, որ նրանք անձամբ ճանաչում են վաղ տարիքում ամուսնացած աղջիկների: Չնայած այս միտման աստիճանաբար նվազելու մասին որոշ վկայությունների, սա եզդիների կյանքի սովորական մասն է, հատկապես՝ գյուղական համայնքներում:<sup>7</sup>
- (3) Թիրախային խմբերի հետ քննարկումների ընթացքում ակնհայտ էր, որ դա առաջին անգամն էր, երբ եզդի երեխաներին հարցնում էին վաղ ամուսնությունների վերաբերյալ իրենց կարծիքի մասին: Կարծիքները մեծապես տարբերվում էին աղջիկների և տղաների խմբերում: Տղաների մեծ մասը խուսափում էր այս երևույթի մասին իրենց սեփական կարծիքն արտահայտելուց և պարզապես հայտարարում, որ դա եզդիների ավանդույթն է և պետք է հարգվի՝ անգամ օրենքին հակասելու դեպքում. «Դա պարզապես ավանդույթ է: Եզդիները շատ ավանդույթներ ունեն, որ մյուսները չեն հասկանում: Մենք մեր ձևով ենք անում, դուք [հայերը]՝ ձեր ձևով» (եզդի տղա, 8-րդ դասարան):
- (4) Աղջիկների թիրախային խմբերում մեծ մասը զգուշորեն ընդունում էր, որ վաղ տարիքում ամուսնանալը սխալ է և որ դա հատկապես

6. Տե՛ս, [https://epfarmenia.am/sites/default/files/Document/2014\\_Field\\_Study\\_Rights\\_of\\_Chidren\\_en.pdf](https://epfarmenia.am/sites/default/files/Document/2014_Field_Study_Rights_of_Chidren_en.pdf)

7. Նույն տեղում:



անարդարացի է աղջիկների հանդեպ: Սակայն, ինչպես և տղաների պարագայում, աղջիկները կառչում էին այն մտքից, որ սա ավանդույթ է և չի կարող փոխվել. *«Ես չեմ կարող պատկերացնել, որ հիմա ամուսնանամ: Բայց իմ մայրը ամուսնացել է, երբ ինձնից ընդամենը մի տարի է մեծ եղել: Ու ինքը չի բողոքում...»* (Եպոհի աղջիկ, 6-րդ դասարան):

- (5) Վաղ ամուսնությունների երևույթը ոչ միայն սահմանափակում է եզրի աղջիկների՝ իրենց կրթությունը և կարիերան շարունակելու հնարավորությունները, այլև հանգեցնում անչափահասների հանդեպ սեռական բռնության<sup>8</sup>: Անչափահաս աղջիկների մեծ մասը ամուսնանում է 18 տարեկան, իսկ հաճախ նաև 30 տարեկանից բարձր տղամարդկանց հետ: Այս աղջիկների մեծամասնությունը ծննդաբերում է ամուսնության առաջին տարվա ընթացքում:
- (6) Վաղ ամուսնությունների երևույթի պահպանմանը նպաստող հանգամանքներից է նաև մեկ այլ վնասակար երևույթ՝ երբ անչափահաս աղջիկներին առևանգում են և ստիպում ամուսնանալ: Ըստ թիրախային խմբերի հետ քննարկումների մասնակիցների արտահայտած կարծիքների, անծանոթների կողմից իրենց աղջիկներին առևանգելու վախն է այն հիմնական պատճառը, որից ելնելով ծնողները նախընտրում են նրանց ամուսնացնելը երիտասարդ տարիքում:
- (7) Աղջիկներին առևանգելու երևույթը, որը ինքնին բռնության դրսևորման ձև է, մեծամասամբ դիտարկվում է որպես վնասաբեր և հնացած սովորույթ: Համաձայն թիրախային խմբերի մասնակիցների, տվյալ ավանդույթը դեռևս պահպանվում է իբրև քիչ թե շատ ընդունված մշակութային երևույթ, և առևանգման դեպքերի մասին սովորաբար հաղորդում չի տրվում ոստիկանությանը, իսկ առևանգված աղջիկներին ստիպում են պահպանել իրենց «ամուսնությունը»: *«... Սա ճիշտ չէ, բայց աղջիկ փախցնելը մեր մշակույթի մասն է եղել սերունդներ ի վեր, և մենք չենք տեսնում, թե դա ոնց պետք է փոխվի»* (Եպոհի հայր):
- (8) ՀՀ Ընտանեկան օրենսգիրքը որպես նվազագույն ամուսնական տարիք սահմանում է տղամարդկանց համար՝ 18, իսկ կանանց համար՝ 17 տարեկանը: Հայաստանի Կառավարությունը նույնպես պարտավորվել է մինչև 2030թ. վերացնել երեխաների՝ վաղ և հարկադիր ամուսնությունները՝ Կայուն զարգացման նպատակների թիրախին համապատասխան: Այնուամենայնիվ, որևէ զգալի գործնական քանքեր չեն գործադրվել Կառավարության կողմից այս վնասակար

8. Տես՝ <https://www.azatutyun.am/a/29893489.html>

երևույթին վերջ տալու ուղղությամբ, ներառյալ՝ տուժողների համար արդարադատություն ապահովելու միջոցով:

- (9) Եզդի աղջիկների վաղ ամուսնության խնդիրը ճանաչվել է մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ՍԻԴԱ-ի կոմիտեի կողմից: Հայաստանի՝ 2016թ. Դիտարկման մեջ Կոմիտեն իր մտահոգություններն է հայտնել եզդի և մուլկան համայնքների շրջանում վաղ ամուսնությունների, այդ համայնքներում աղջիկների՝ դպրոցից դուրս մնալու ու ամողջապահական և այլ պետական ծառայությունների հասանելիության վերաբերյալ<sup>9</sup>:

### **Առաջարկություններ՝**

- (10) Իրականացնել հասցեական միջոցառումներ վաղ ամուսնությունների երևույթը ողջամիտ ժամկետներում վերացնելու ուղղությամբ, այդ թվում՝ դատական հայցերի, ոստիկանների վերապատրաստման, ծնողների կրթման և այլ միջոցներով:
- (11) Ստեղծել դիտարկման և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմներ՝ ուղղված վաղ ամուսնության դեպքերի վերհանմանը և համարժեք արձագանքմանը:
- (12) Եզդիական համայնքը ներկայացնող ԶՀԿ-ների հետ համագործակցելով՝ մշակել և իրականացնել իրազեկման լայնածավալ միջոցառումներ՝ ուղղված վաղ ամուսնությունների երևույթի վերացմանը:
- (13) Իրականացնել հասցեական միջոցառումներ աղջիկների առևանգման երևույթը ողջամիտ ժամկետներում վերացնելու ուղղությամբ, այդ թվում՝ դատական հայցերի, ոստիկանների վերապատրաստման, ծնողների կրթման և այլ միջոցներով:
- (14) Ստեղծել դիտարկման և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմներ՝ ուղղված աղջիկների առևանգման դեպքերի վերհանմանը և համարժեք արձագանքմանը:
- (15) Եզդիական համայնքը ներկայացնող ԶՀԿ-ների հետ համագործակցելով՝ մշակել և իրականացնել իրազեկման լայնածավալ միջոցառումներ՝ ուղղված աղջիկների առևանգման երևույթի վերացմանը:

9. [Stu' https://www.refworld.org/pdfid/583863b34.pdf](https://www.refworld.org/pdfid/583863b34.pdf)

## ՀՈԴՎԱԾ 28. ԵՐԵՒԱՆՅԻ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆԵԸ

- (1) Եզդի երեխաները բախվում են կրթության հետ կապված մի շարք խնդիրների՝ ենթակառուցվածքներից սկսած (դպրոցական շենքերի վատ վիճակը, օժանդակ շինությունների, օրինակ՝ բուժսենյակների կամ ճաշարանների բացակայությունը, տնից դպրոց և դպրոցից տուն տրանսպորտի բացակայությունը և այլն) մինչև կրթության որակին առնչվող խնդիրներ (որակյալ առարկայական ծրագիր, գնահատման արդյունավետ մեխանիզմներ, որակյալ դասագրքեր, ուսուցիչների վերապատրաստում և այլն): Ստորև նկարագրված են այն խնդիրները, որոնք առավել հատուկ են եզդիական համայնքին և սույն զեկույցի նախապատրաստման շրջանակներում թիրախային խմբերի հետ անցկացված հարցազրույցների մասնակիցների կողմից մատնանշվել են որպես գերակա:

### *Դպրոցից դուրս մնալը՝*

- 1.1) Հայաստանում ընդհանուր հանրային կրթությունը, որը ներառում է տարրական (1-4-րդ դասարաններ) և միջին (5-9-րդ դասարաններ) կրթողականները, պարտադիր է, մինչդեռ միջնակարգ կրթությունը (ավագ դպրոցը՝ 10-12-րդ դասարաններ) ոչ պարտադիր է, սակայն պետության կողմից տրամադրվում է անվճար: Այս համակարգը ներդրվել է 2006-2007թթ. ուսումնական տարվա ընթացքում՝ փոխարինելով 10-ամյա կրթության համակարգին:
- 1.2) ՅՈՒՆԵՍԿՈ-ի Վիճակագրության ինստիտուտի տվյալների համաձայն, 2016թ. (ըստ եղած ամենաթարմ տվյալների) դպրոցից դուրս մնալու ցուցանիշը Հայաստանում եղել է 6.42%<sup>10</sup>: Այնուամենայնիվ, առանձին աղբյուրների համաձայն, ներառյալ՝ թիրախային խմբերի հետ ունեցած քննարկումների արդյունքներն ու մամուլի հրապարակումները, այս ցուցանիշը շատ ավելի բարձր է եզդիական համայնքում:
- 1.3) Չնայած ավագ դպրոցը չավարտած եզդի երեխաների վերաբերյալ որևէ վստահելի վիճակագրություն գոյություն չունի, դպրոցից դուրս մնալը եզդի երեխաների շրջանում տարածված խնդիր է եղել տասնամյակներ շարունակ: Այս միտման պատճառները

10. Տես՝ [http://data.uis.unesco.org/Index.aspx?queryid=156&fbclid=IwAR1bkOW-QL2VQIeb\\_rMo-BYXMrmA49bfj-D250idu40iHyIphjhfv-V15wNZQ](http://data.uis.unesco.org/Index.aspx?queryid=156&fbclid=IwAR1bkOW-QL2VQIeb_rMo-BYXMrmA49bfj-D250idu40iHyIphjhfv-V15wNZQ)

բարդ են և ոչ ամբողջությամբ բացահայտված: «Սեյվ դը չիլդրեն» (Save the Children) կազմակերպության կողմից 2015թ. հրապարակված «Երեխաների իրավունքների վիճակը Հայաստանում» զեկույցում նշվել է, որ Հայաստանի երեխաների՝ դպրոցից դուրս մնալու դեպքերի մոտ 50%-ը<sup>11</sup> սոցիալական պայմանների հետևանք է: Չնայած հաստատապես այս վիճակագրությունը վերաբերելի է եզրի երեխաներին, սակայն կան այլ՝ այս համայնքին առավել հատուկ պատճառներ ևս:

- 1.4) Վաղ ամուսնությունների երևույթի տարածվածությունն այն գործոններից մեկն է, որ նշանակալի չափով նպաստում է դպրոցից դուրս մնալուն, հիմնականում՝ եզրի աղքիկների շրջանում: Ինչպես նշվեց վերը՝ 19-րդ հոդվածին վերաբերող բաժնում, եզրի աղքիկների մոտ տարածված է 12-13 տարեկանում ամուսնանալը: Որպես կանոն, վաղ տարիքում ամուսնացած աղքիկներին հարկադրում են անմիջապես դուրս գալ դպրոցից՝ առանց կրթությունը շարունակելու որևէ հեռանկարի<sup>12</sup>:
- 1.5) Համաձայն թիրախային խմբի քննարկումների, դպրոցից դուրս մնալու պատճառներից մեկն է նաև այն, որ եզրիական համայնքներում, տարբեր խնդիրների բերումով, երեխաների, հատկապես՝ աղքիկ երեխաների կրթությանը նախապատվություն չի տրվում: Սա արդյունք է գյուղական դպրոցներում մատուցվող կրթության ցածր որակի, այն խտրական վերաբերմունքի, որին ենթարկվում են երեխաները դպրոցում և որը վիատեցնում է երեխաներին, ինչպես նաև՝ այն ընդհանուր համոզման, որ եզրի տղաների համար ավելի կարևոր է թողնել դպրոցը և որքան հնարավոր է վաղ սկսել աշխատելը, իսկ եզրի աղքիկների համար՝ ավելի կարևոր է թողնել դպրոցը և ամուսնանալ:
- 1.6) Ենթակառուցվածքների բացակայությունն այս իրավիճակին նպաստող պատճառներից մեկն է: Մեծամասամբ եզրիաբնակ առնվազն 10 գյուղում չկան տեղական ավագ դպրոցներ (Հայաստանում ոչ բոլոր դպրոցներն ունեն ավագ դպրոցի առարկայական ծրագիր, որոշները միայն հիմնական և միջնակարգ

11. Տես՝ <https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-eng.pdf>

12. Տես՝ <https://www.azatutyun.am/a/29893489.html>

կրթություն են տրամադրում): Տեղական դպրոցների, ինչպես նաև՝ այլ համայնքներ գնալու համար հանրային տրանսպորտի բացակայության պայմաններում եզրի երեխաները զրկված են իրենց կրթությունը շարունակելու հնարավորությունից: Այս խնդիրը հատկապես սուր է եզրի աղջիկների համար, որոնց արգելված է միայնակ հեռու տարածություն գնալը:

- 1.7) Ըստ ՀՀ Կրթության և գիտության նախարարության (գրելու պահի դրությամբ՝ ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության) տվյալների, 369 եզրի երեխաներ ներգրավված են 2018-2019թթ. ուսումնական տարվա ավագ դպրոցի կրթական համակարգում: 44 եզրի երեխաներ դուրս են մնացել դպրոցից 9-րդ դասարանում՝ 25 աղջիկ և 19 տղա:
- 1.8) «Սինչար» եզրիների ազգային միավորման «Եզրի կանանց կրթության իրավունքը Հայաստանում խախտվում է» 2016թ. զեկույցում բերված է 3 դպրոցի վերաբերյալ 2004-2015թթ. հետևյալ վիճակագրությունը<sup>13</sup>.
- Արտաշատի դպրոց՝ 84 եզրի աղջիկներից 37-ը ավարտել են 9-րդ դասարանը, 3-ը՝ 12 դասարանը,
  - Նալբանդյան դպրոց՝ 55 եզրի աղջիկներից 41-ը ավարտել 9-րդ դասարանը, 14-ը՝ 12-րդ դասարանը,
  - Ֆերիկի դպրոց՝ 25 եզրի աղջիկներից 22-ը ավարտել 9-րդ դասարանը (10-12-րդ դասարաններ չկան):

*Երկարատև բացակայություններ սեպոնային աշխատանքի պատճառով՝*

- 1.9) Եզրիների մեծամասնությունն ապրում է գյուղական համայնքներում: Տարին մի քանի անգամ, սեզոնային գյուղատնտեսական աշխատանքների ժամանակաշրջանում, 2-3 շաբաթով երեխաները դպրոց չեն հաճախում: Փոխարենը նրանք պետք է մնան տանը և օգնեն ծնողներին գյուղատնտեսական տարբեր աշխատանքներում, որը հաճախ ենթադրում է ծանր առարկաներ կրելը, ժամեր շարունակ արևի տակ աշխատելը և ծանր տեխնիկա աշխատեցնելը: Չնայած այս խնդիրը չի վերաբերում միայն եզրիական համայնքներին, այլ առկա է ամբողջ Հայաստանի հեռավոր գյուղերում, սակայն կրթության հետ կապված այլ դժվարությունների հետ միասին առավել դժվար վիճակ է ստեղծում եզրի երեխաների համար:

13. Տես՝ <https://epress.am/en/2016/01/29/yzidi-girls-in-armenia-are-denied-their-right-to-education-report.html>

1.10) Այս խնդիրն ամբողջությամբ չի ուսումնասիրվել պետական մարմինների կողմից, և չկան վիճակագրական տվյալներ դպրոցից երեխաների բացակայության հաճախակիության, տևողության, ինչպես նաև խնդրի տարածվածության մասին: Այնուամենայնիվ, այս խնդիրը բարձրաձայնվել է թիրախային 6 խմբերի գրեթե բոլոր մասնակիցների կողմից, ինչպես նաև տեղական ԶԻԿ-ների և միջազգային կազմակերպությունների զեկույցներում: 2008թ. ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ կատարված երկու հետազոտությունների՝ «Երեխաների աշխատանքը Հայաստանում» և «Հայաստանի դպրոցներում հոսունության երևույթի ուսումնասիրումը՝ կապված աշակերտների բացակայության հետ» արդյունքներով բացահայտվել է Հայաստանում աշակերտների բացակայությունների, դպրոցից դուրս մնալու ցուցանիշների և երեխաների աշխատանքի միջև կապը: Եզրակացությունների համաձայն, 7-18 տարեկան երեխաների 6.1 տոկոսը կամ մոտ 3,500-ը Հայաստանում ներգրավված է որևէ տեսակի աշխատանքում, իսկ հետազոտության ընթացքում հարցազրույցներին մասնակցած երեխաների 40 տոկոսը ընդհանրապես դպրոց չէր հաճախում<sup>14</sup>:

1.11) Հարցին, թե՛ ինչու է երեխաների համար սեզոնային աշխատանքի պատճառով դպրոց չգնալը սովորական, թիրախային խմբերի մասնակիցների մեծ մասը (թե՛ երեխաները և թե՛ ծնողները) նշել են, որ ընտանիքները չեն կարող իրենց թույլ տալ դրսից օգնող բերել, իսկ առանց երեխաների օգնության ի վիճակի չեն կատարել բոլոր սեզոնային աշխատանքները. *«Գյուղատնտեսությունը մեր շահույթ ստանալու միակ ճանապարհն է: Եվ դա շատ փոքր եկամուտ է: Այս գյուղերում ապրող մարդկանց մեծ մասը աղքատության մեջ են ապրում: Իրենց էլ դուր չի գալիս իրենց երեխաներին աշխատեցնելը: Բայց՝ ստիպված են, թե չէ չեն կարող գոյատևել» (Եպոհի մայր):*

1.12) Վիատեցնող է այն փաստը, որ չնայած երեխաների աշխատանքը ծագում է աղքատության պատճառով, այն միայն երկարացնում ու խորացնում է աղքատության շղթան՝ երեխաներին դպրոցից հեռու պահելով:

14. Տես՝ [https://www.unicef.org/media/media\\_46200.html](https://www.unicef.org/media/media_46200.html)

## խտրականություն

- 1.13) Եզդի երեխաների հանդեպ խտրականությունը դրսևորվում է տարբեր կերպ: Վերը՝ 14-րդ հոդվածին նվիրված բաժնում, նկարագրվեցին կրոնական համոզմունքների հիմքով խտրականության մի քանի դրսևորումներ: Այս երևույթները նպաստում են ներկայիս այն ընկալմանը, որ քրիստոնյա լինելը Հայաստանում ապրելու հիմունքներից է և որ բոլոր մնացած կրոնական համոզմունքները, կարծիքները, ավանդույթներն ու ինքնությունները «աննորմալ են»:
- 1.14) Եզդի երեխաների նկատմամբ խտրականության մեկ այլ ձև է դպրոցական ուսուցիչների և վարչակազմի, ինչպես նաև մյուս երեխաների ծնողների կանխակալ վերաբերմունքը: Նման վերաբերմունքի հիմքում ընկած է այն տարածված խարանը, որ եզդի երեխաները ընդունակ չեն լավ սովորելու, հետաքրքրություն չունեն կրթության հանդեպ և արժանի չեն ուսուցիչների ջանքերին: ԱՄՆ Պետքարտուղարության Մարդու իրավունքների 2018թ. Չեկույցում<sup>15</sup> նշվում է, որ գյուղերից մեկում (որի անունը և դպրոցը չեն նշվում) ծնողները բողոքել են եզդի երեխաների հանդեպ դպրոցի տնօրենի և ուսուցիչների խտրական վերաբերմունքից: Ծնողները հայտնել են, որ ուսուցիչները (որոնցից ոչ մեկը եզդիական համայնքից չէ) շարունակ արհամարհանքով են արտահայտվել եզդի երեխաների մասին:
- 1.15) Առանձին ապացույցներ վկայում են այն մասին, որ դասաժամերը կարող են նաև քարոզ պարունակել կրոնական փոքրամասնությունների դեմ: Վերջիններս պիտակավորվում են որպես «աղանդ», նրանց դեմ հուժկու քարոզչություն է իրականացվում ազգայնական խմբերի կողմից (օրինակ՝ «Մեկ ազգ»), և նրանք ներկայացվում են որպես վնասակար, հակահայկական երևույթ, որը «քանդում է հայ ընտանիքն ու համայնքը»՝ այդպիսով, թշնամանքի մթնոլորտ ստեղծելով փոքրամասնությունների երեխաների հանդեպ: Դժբախտաբար, նման ծայրահեղական տեսակետները սողոսկում են դասասենյակներ, հատկապես՝ այն դասաժամերին, որոնց ընթացքում մշտապես հերոսացվում են հայրենասիրական և ռազմահայրենասիրական արժեքները («Հայ ժողովրդի պատմություն», «Հայ գրականություն», «Ռազմագիտություն» և այլն):

15. Տես՝ [https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2018\\_arm.pdf](https://am.usembassy.gov/wp-content/uploads/sites/92/hrr2018_arm.pdf)

1.16) Ինչպես նշվեց վերը՝ 19-րդ հողվածին նվիրված բաժնում, եզրինների հանդեպ Հայաստանում լայնորեն տարածված են բացասական և թշնամական մոտեցումներ, որոնք այնքան խորն են արմատավորվել, որ «եզրի» բառը ամօրյա խոսակցական լեզվում, այդ թվում՝ դպրոցներում և հեռուստատեսությամբ/ռադիոյով օգտագործվում է որպես վիրավորանք: Այնուամենայնիվ, մի շարք հանգամանքների բերումով, այդ թվում՝ խորականության դեմ օրենսդրության և խտրականության և մշտադիտարկման արդյունավետ մեխանիզմների մասին իրազեկվածության բացակայության պատճառով քիչ թվով խտրականության դեպքեր են հանրայնացվում:

### *Լեզուն՝*

1.17) Լեզվի հետ կապված, Հայաստանում եզրի երեխաները բախվում են երկու տեսակի դժվարության: Առաջին խնդիրը վերաբերում է դպրոցում առկա այն դժվարություններին, որոնք կապված են հայոց լեզվի իմացության հետ: Եզրի երեխաների մեծ մասը մեծանում են իրենց մայրենի լեզվով խոսելով և հայոց լեզվին կամ վատ են տիրապետում, կամ չեն տիրապետում ընդհանրապես: Սա լուրջ դժվարություններ է ստեղծում ուսումնական առաջին տարում, երբ բոլոր առարկաները դասավանդվում են հայերեն լեզվով: Նախադպրոցական կրթական ծառայությունների բացակայության (եզրիական գյուղերի մեծ մասում չկան մանկապարտեզներ), ինչպես նաև լեզվի հատուկ/լրացուցիչ պարապմունքների բացակայության պայմաններում եզրի երեխաները հաճախ մեծ դժվարություններ են կրում և հետ մնում իրենց հայ համադասարանցիներից: Այս խնդիրն էլ ավելի է խորացնում ուսուցիչների այն պատկերացումը, որ եզրի երեխաներն ընդունակ չեն լավ սովորելու – լեզվական դժվարությունները դիտվում են որպես մտավոր անկարողության և մոտիվացիայի բացակայության ապացույց:

1.18) Լեզվի հետ կապված երկրորդ խնդիրը եզրիերեն լեզվի որակյալ դասաժամերի բացակայությունն է: Հայոց լեզուն սովորելու սկզբնական դժվարությունը հաղթահարելուց հետո եզրի երեխաները դանդաղորեն անցնում են հիմնականում հայերեն լեզվով կարդալ-գրելուն և հաղորդակցվելուն: Հայոց լեզվի գերակշռումը դպրոցում, հեռուստատեսությունում, արվեստի, գրականության և այլ ոլորտներում հաճախ հանգեցնում



են նրան, որ եզդի երեխաները մոռանում են իրենց մայրենի լեզուն, որն իրենց ինքնության կարևոր մասն է: Խնդիրն էլ ավելի է սրվում եզդիերեն լեզվի որակյալ դասաժամերի բացակայության պատճառով: Այս առարկան դասավանդվում է միայն եզդիական դպրոցների մի մասում: Ուսումնական պարտադիր ծրագրի մասը չլինելով, այն անց է կացվում դպրոցական օրվա վերջում և ի տարբերություն մյուս առարկաների՝ կանոնակարգված չէ: Արդյունքում, երեխաներն ու ծնողները հաճախ գանգատվում են, որ այս դասաժամերը մեծամասամբ անարդյունավետ են, չեն համապատասխանում որևէ չափորոշիչի և չեն նպաստում եզդիերեն լեզվի իմացության բարելավմանը: Եզդիերեն լեզվի ուսուցիչների պաշտոնական հավաստագրման բացակայության պայմաններում, այս առարկայի ուսուցիչների մեծ մասը պարզապես եզդիական համայնքի ներկայացուցիչներն են՝ առանց որևէ մանկավարժական կրթության կամ փորձի:

### **Առաջարկություններ՝**

- (2)** Կանոնավոր կերպով հավաքել և հրապարակել Հայաստանում դպրոցից դուրս մնալու վերաբերյալ տվյալներն ու վիճակագրությունը՝ տարանջատված ըստ տարիքի, սեռի, էթնիկ/կրոնական ինքնության, բնակավայրի և այլն:
- (3)** Համապարփակ և խորացված հետազոտություն իրականացնել եզդի երեխաների՝ դպրոցից դուրս մնալու պատճառների և հետևանքների մասին:
- (4)** Ստեղծել դիտարկման և հաշվետվությունների ներկայացման արդյունավետ մեխանիզմներ՝ ուղղված դպրոցից դուրս մնալու դեպքերի վերհանմանը և համարժեք արձագանքմանը (այդ թվում՝ ֆինանսապես աջակցելուն)՝ ապահովելու երեխաների՝ դպրոց վերադառնալը:
- (5)** Իրականացնել հասցեական միջոցառումներ վաղ ամուսնությունների երևույթը ողջամիտ ժամկետներում վերացնելու ուղղությամբ, այդ թվում՝ դատական հայցերի, ոստիկանների վերապատրաստման, ծնողների կրթման և այլ միջոցներով:
- (6)** Եզդի ծնողների և երեխաների հետ իրականացնել իրազեկման լայնածավալ միջոցառումներ՝ ուղղված երեխաների կրթության կարևորմանը՝ հատուկ կենտրոնանալով աղջիկների կրթությունը կարևորելու վրա:

- (7) Իրականացնել հասցեական միջոցառումներ՝ անհրաժեշտ այն բուլոր ենթակառուցվածքները ստեղծելու համար, որոնք կապահովեն ավագ դպրոցում կրթության մատչելիությունն ավագ դպրոցի տարիքի բոլոր եզրի երեխաների համար:
- (8) Իրականացնել հասցեական միջոցառումներ մանկական աշխատանքի երևույթը ողջամիտ ժամկետներում վերացնելու ուղղությամբ, այդ թվում՝ իրազեկության բարձրացման, ծնողների կրթման, դատական հայցերի և այլ միջոցներով:
- (9) Ստեղծել դիտարկման և հաշվետվությունների ներկայացման արդյունավետ մեխանիզմներ՝ ուղղված երկարատև բացակայությունների դեպքերի վերհանմանը և համարժեք արձագանքմանը (այդ թվում՝ ֆինանսապես աջակցելուն)՝ ապահովելու երեխաների՝ դպրոց վերադառնալը:
- (10) Իրականացնել իրազեկման և հանրակրթական լայնածավալ միջոցառումներ՝ ուղղված եզրի երեխաների հանդեպ խտրական մոտեցումներին արձագանքելուն, այդ թվում՝ դպրոցում իրականացվող ծրագրերի միջոցով:
- (11) Անցկացնել ուսուցիչների կանոնավոր վերապատրաստում՝ նպատակ ունենալով ապահովել կրթության նկատմամբ ներառական և ոչ խտրական վերաբերմունքը և հատկապես՝ եզրի երեխաների հետ աշխատանքում ներառական մեթոդների կիրառումը:
- (12) Ընդունել խտրականության դեմ արդյունավետ և համապարփակ օրենսդրություն: Ապահովել արդյունավետ մեխանիզմների, այդ թվում՝ դիտարկման և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմների, ինչպես նաև Հավասարության հարցերով մարմնի առկայությունը՝ այս օրենսդրության կիրառումը գործնականում երաշխավորելու համար: Ապահովել, որպեսզի փոքրամասնության ներկայացուցիչները, այդ թվում՝ անհատներն ու խմբերը, ընդգրկված լինեն օրենսդրական և իրավակիրառ մեխանիզմների մշակման գործընթացում: Ընդհանուր բնակչության և փոքրամասնություն կազմող խմբերի շրջանում հասցեական միջոցառումներ իրականացնել՝ խտրականության դեմ օրենսդրության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:
- (13) Ապահովել հայոց լեզվի լրացուցիչ անվճար դասաժամերի առկայությունը եզրի երեխաների համար՝ մինչև առաջին դպրոցական տարին/ դրա ընթացքում:

- (14) Ապահովել եզրհերերեն լեզվի որակյալ դասաժամերի հասանելիությունը բոլոր եզրի երեխաների համար՝ դպրոցական կրթության ամբողջ ընթացքում:

## ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ԵՐԿՆՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՀԱՐՑԵՐ՝

### *Հարցեր օրենսդրության վերաբերյալ՝*

- (1) Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել խտրականության դեմ արդյունավետ և համապարփակ օրենսդրություն ընդունելու ծրագրերի մասին: Մասնավորապես, խնդրում ենք նկարագրել, թե ինչպիսի կիրառման, այդ թվում՝ դիտարկման և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմներ են ծրագրավորված ներդնել: Խնդրում ենք ներկայացնել Հավասարության հարցերով մարմին ստեղծելու ծրագրերը: Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել, թե ինչպես են էթնիկ և կրոնական փոքրամասնությունների, ինչպես նաև այլ փոքրամասնություն կազմող համայնքների ներկայացուցիչները ներգրավված եղել խտրականության դեմ օրենսդրության և դրա կիրառման մեխանիզմների մշակման գործընթացում:
- (2) Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել, թե ինչու Հայաստանի էթնիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքներն համարժեքորեն արտացոլված չեն հետևյալ փաստաթղթերում՝ 1) «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության ռազմավարական ծրագիր», 2) «ՀՀ կրթության՝ մինչև 2030թ. զարգացման պետական ծրագիր», 3) «Հայաստանում համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների ծրագիր և ժամանակացույց»: Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել կոնկրետ ծրագրերի մասին (ներառյալ՝ ժամկետները, բյուջետային և կադրային հատկացումները և պատասխանատու մարմինները), որոնք ուղղված են այս երեք փաստաթղթերի վերամշակմանը՝ դրանցում էթնիկ և կրոնական փոքրամասնությունների երեխաների իրավունքներն ավելի լավ արտացոլելու նպատակով:
- (3) Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել կոնկրետ ծրագրերի մասին (ներառյալ՝ ժամկետները, բյուջետային և կադրային հատկացումները և պատասխանատու մարմինները), որոնք ուղղված են

որոշումների ներառական կայացման պրակտիկայի ներդրմանը՝ ապահովելու համար, որպեսզի փոքրամասնություն կազմող խմբերի ներկայացուցիչները գործուն մասնակցություն ունենան համապատասխան բոլոր որոշումների կայացման գործընթացում:

- (4) Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել իրազեկվածության մակարդակի բարձրացման այն կոնկրետ միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են պետության կողմից՝ ուղղված. ա) ընդհանուր բնակչության շրջանում փոքրամասնությունների իրավունքների մասին իրազեկվածության բարելավմանը, և բ) փոքրամասնությունների ներկայացուցիչների իրավագիտակցության բարձրացմանը: Խնդրում ենք նաև տեղեկացնել այն կոնկրետ ծրագրերի մասին (ներառյալ՝ ժամկետները, բյուջետային և կադրային հատկացումները և պատասխանատու մարմինները), որոնք ուղղված են մոտ ապագայում իրազեկման այդ միջոցառումների իրականացմանը:

*Հարցեր երեխայի՝ մտքի, խոճի և կրոնի ապատության իրավունքի վերաբերյալ՝*

- (5) Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել «Հայ եկեղեցու պատմություն» առարկան դպրոցական պարտադիր ծրագրից հանելուն և ընտրովի դարձնելուն ուղղված կոնկրետ ծրագրերի մասին:
- (6) Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել կոնկրետ ծրագրերի մասին՝ ուղղված նրան, որպեսզի երեխաները չենթարկվեն կրոնական պրակտիկայի տարրերի պարտադիր ներգործությանը, ինչպիսիք են, օրինակ՝ աղոթքը, Աստվածաշնչի ընթերցանությունը, ուղևորությունը դեպի կրոնական վայրեր, եկեղեցականի ներկայությունը և այլն: Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել նաև այն կոնկրետ ծրագրերի մասին (ներառյալ՝ ժամկետները, բյուջետային և կադրային հատկացումները և պատասխանատու մարմինները), որոնք ուղղված են մոտ ապագայում այդ միջոցառումների իրականացմանը:
- (7) Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել այն իրազեկման և հանրակրթական կոնկրետ միջոցառումների մասին, որոնք պետության կողմից իրականացվել են կրոնական և էթնիկ փոքրամասնություն կազմող խմբերի հետ՝ իրենց իրավունքների և ազատությունների մասին իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:
- (8) Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել ուսուցիչների վերապատրաստման այն միջոցառումների մասին, որոնք պետության կողմից իրականացվել են՝ նպատակ ունենալով ապահովել կրթության

նկատմամբ ներառական և ոչ խտրական վերաբերմունքը և հատկապես՝ եզրի երեխաների հետ աշխատանքում ներառական մեթոդների կիրառումը:

*Հարցեր բռնության և չարաշահումների մասին՝*

- (9)** Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել Հայաստանի եզրիական համայնքում վաղ ամուսնությունների վիճակագրության մասին: Վաղ ամուսնության քանի՞ դեպք է եղել անցած տասնամյակում: Խնդրում ենք տվյալներ տրամադրել՝ տարանջատված ըստ տարիքի, սեռի և բնակավայրի: Խնդրում ենք առանձին տեղեկություններ տրամադրել 18 տարեկանից բարձր տղամարդկանց հետ ամուսնացած անչափահաս աղջիկների թվի վերաբերյալ:
- (10)** Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել այն կոնկրետ միջոցառումների մասին, որոնք պետության կողմից իրականացվել են վաղ ամուսնությունների երևույթը վերացնելու ուղղությամբ: Խնդրում ենք Կոմիտեին նաև տեղեկացնել այն կոնկրետ ծրագրերի մասին (ներառյալ՝ ժամկետները, բյուջետային և կադրային հատկացումները և պատասխանատու մարմինները), որոնք ուղղված են այդ երևույթի վերացմանը:
- (11)** Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել վաղ ամուսնության դեպքերի բացահայտմանն ուղղված դիտարկման և հաշվետվությունների ներկայացման մեխանիզմների վերաբերյալ: Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել նաև այն կոնկրետ ծրագրերի մասին (ներառյալ՝ ժամկետները, բյուջետային և կադրային հատկացումները և պատասխանատու մարմինները), որոնք ուղղված են այդ մեխանիզմների ստեղծմանը:
- (12)** Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել Հայաստանում եզրիական համայնքի աղջիկների առևանգման վիճակագրության վերաբերյալ: Աղջիկ առևանգելու քանի՞ դեպք է եղել անցած տասնամյակում: Խնդրում ենք տվյալներ տրամադրել՝ տարանջատված ըստ տարիքի, սեռի և բնակավայրի:
- (13)** Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել այն կոնկրետ միջոցառումների մասին, որոնք պետության կողմից իրականացվել են աղջիկների առևանգման երևույթը վերացնելու ուղղությամբ: Խնդրում ենք Կոմիտեին նաև տեղեկացնել այն կոնկրետ ծրագրերի մասին (ներառյալ՝ ժամկետները, բյուջետային, կադրային հատկացումները և պատասխանատու մարմինները), որոնք ուղղված են այդ երևույթի վերացմանը:

### *Չարքեր կրթության վերաբերյալ՝*

- (14)** Խնդրում ենք Կոմիտեին տրամադրել դպրոցից՝ եզդի երեխաների դուրս մնալու վերաբերյալ տվյալներն ու վիճակագրությունը՝ տարանջատված ըստ տարիքի, սեռի, բնակավայրի և այլն: Ընդհանուր առմամբ, եզդի երեխաների քանի՞ տոկոսն է ավարտել դպրոցը անցած տասնամյակում: Ինչպե՞ս է այդ թիվը համեմատվում Չայաստանի ընդհանուր բնակչության թվի հետ:
- (15)** Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել այն պատճառների մասին, որոնք հանգեցնում են դպրոցից՝ եզդի երեխաների դուրս մնալուն:
- (16)** Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել այն կոնկրետ միջոցառումների մասին, որոնք պետության կողմից իրականացվել են եզդի երեխաների՝ դպրոցից դուրս մնալու խնդրին արձագանքելու ուղղությամբ: Խնդրում ենք նաև տեղեկացնել այն կոնկրետ ծրագրերի մասին (ներառյալ՝ ժամկետները, բյուջետային, կադրային հատկացումները և պատասխանատու մարմինները), որոնք ուղղված են այդ խնդրի լուծմանը:
- (17)** Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել դիտարկման և հաշվետվությունների ներկայացման արդյունավետ մեխանիզմների ներդրման որևէ ծրագրի վերաբերյալ՝ ուղղված դպրոցից դուրս մնալու դեպքերի վերհանմանը և համարժեք արձագանքմանը (այդ թվում՝ ֆինանսապես աջակցելուն)՝ ապահովելու երեխաների՝ դպրոց վերադառնալը:
- (18)** Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել այն կոնկրետ միջոցառումների մասին, որոնք պետության կողմից իրականացվել են երեխաների աշխատանքը Չայաստանում, մասնավորապես՝ եզդիական համայնքում վերացնելու ուղղությամբ: Խնդրում ենք նաև տեղեկացնել այն կոնկրետ ծրագրերի մասին (ներառյալ՝ ժամկետները, բյուջետային, կադրային հատկացումները և պատասխանատու մարմինները), որոնք ուղղված են այդ խնդրի լուծմանը:
- (19)** Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել այն գյուղերի թվի մասին, հատկապես՝ եզդիական մեծ համայնքներ ունեցող, որոնցում չկան ավագ դպրոցներ: Խնդրում ենք Կոմիտեին նաև տեղեկացնել այն կոնկրետ ծրագրերի մասին (ներառյալ՝ ժամկետները, բյուջետային, կադրային հատկացումները և պատասխանատու մարմինները), որոնք ուղղված են այս գյուղերի երեխաների համար ավագ դպրոցում կրթության մատչելիությունն ապահովելուն:

- (20) Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել այն կոնկրետ միջոցառումների մասին, որոնք պետության կողմից իրականացվել են՝ ապահովելու համար, որպեսզի եզդի երեխաներն անհրաժեշտ աջակցություն ստանան հայոց լեզուն սովորելու համար՝ մինչև առաջին դպրոցական տարին/դրա ընթացքում: Խնդրում ենք նաև տեղեկացնել այն կոնկրետ ծրագրերի մասին (ներառյալ՝ ժամկետները, բյուջետային, կադրային հատկացումները և պատասխանատու մարմինները), որոնք ուղղված են այդ աջակցությունը տրամադրելուն:
- (21) Խնդրում ենք Կոմիտեին տեղեկացնել այն միջոցառումների մասին, որոնք պետության կողմից իրականացվել են եզդի երեխաների համար եզդիերեն լեզվի որակյալ կրթության մատչելիությունն ապահովելու համար, այդ թվում՝ դիտարկման, ուսուցիչների վերապատրաստման, չափորոշիչների մշակման և այլ միջոցներով:







